

Յոպպէի վանքին մէջ հիւրընկալուելը և նոյն վանքին Արրահամու իշխանութեան տակ ըլլալը: Բառնարաս վրդ. նոյն հատուածին աղբիւրը ր. յիշատակարանն կոչած է այն գրուածքը որ կը պարունակէ Երուսաղէմացի ազգայինի մը ձեռքով հաւաքուած արաբական յիշատակարանները և պատմութիւնները զոր օգտագործած է իր գիրքին մէջ. նոյն յիշատակարանը այժմ մէջտեղ չէ. կը կարծուի որ Միւսթիւր էտ-տին էլ Համպալիի գրած Մէքքէցի Շէյխին ճանապարհորդութեան վերաբերեալ հատուածը առնուած է նոյն յիշատակարանէն: Շատ աւելի վերջ, 1694ին, ունինք նաև ուրիշ վկայութիւն մը Յոպպէի վանքի նկարագրութեան համար: Արաբացի պատմիչ և բանաստեղծ մը Ապս իւլ Ղանի Նապրուսի կ'ուղևորի Դամասկոս, Եգիպտոս և Արաբիա և ապա 1694ին կը հասնի Յոպպէ և կ'իջևանի Հայոց վանքը, ուր ինքը և իր ընկերները մեծ ընդունելութիւն կը գտնեն Հայոց միաբանութենէն. ան մեծ գովութեամբ կը նկարագրէ Յոպպէի վանքը իր պատմութեան մէջ. կը յիշէ յետոյ վանքին հաստատուն շինուածքը, կը յարէ թէ ան ամուր բերդի մը նման պարիսպներով ամրացած է և ունի աշտարակներ ևս. Յոպպէի մէջ ամենէն ամրացեալ տեղը Հայոց վանքն է: Իրեն և ընկերաց համար արուած հիւրընկալութիւնը ու պատիւը մեծ ուրախութիւն պատճառած է: Ան յետոյ կը գրէ ոտանաւոր քերթուած մը Յոպպէ քաղաքին վրայ. (Տե՛ս Ա. եպս. Պասս. Երուս. Ա. Հտր. էջ 414): Ըստ Huartի, (Histoire des Arabes, Բ. Հտր. էջ 343) Ապտ իւլ Ղանի էլ Նապրուսի բանաստեղծ պատմիչը « գլխաւորապէս հոգեկոյտ մ'է որ սուրբի մը համբաւը ունի»: Ճիշտ է թէ Հայոց Յոպպէի վանքը մաքսատան դէմ շինուած ծովահայկաց և բարձրադիր քարուկիր շէնք մ'է, հաստակառոյց պատերով և տակուն կառուցուածքով. այժմ շէնքը երկյարկանի է. ստորին յարկը կը բովանդակէ Տեսչարանը տեսչին ննջարանով, միաբանաց սենեակները, սեղանատունը եւ խոհանոցը ու ջրհոր մը. իսկ վերի յարկն ունի ընդարձակ եւ կահաւորեալ սրահ մը՝ Պատրիարքարան անուամբ, յարակից ճաշարանով և ննջարանով: Վանքը ունի փոքր եւ վայելուչ եկեղեցի մը յանուն Ս. Նիկողայոսի. կան 20է աւելի ուխտաւորաց սենեակներ, եւ փոքրիկ դպրոց մը: